21. ՇԱՄԴԱՆ ԱԽՊԵՐ

Ինըմ ա չինըմ, մին թաքավըեր ա ինըմ։ Էս թաքավըերը շատ մըծընալան աշկերը տեսնըմ չի։ Հիշքան դոխտուրնե ըն կյամ, կյիր անողնե ըն կյամ, կարըմ չըն թա էս թաքավերեն աշկերը սըղըցընին։ Լոխ էլ մըտածըմ ըն, ամմա դե վրեչ մինը կարըմ չի թա ճար անե։

Թաքավըերեն ինըմ ա մին տըղա։ Էս տըղան շատ ա ման կյամ, շատ ա չըրչարվըմ, վրեր մին մարթ ճարե հորն աշկերը լիվըցընե, ամմալ չի կյամ։ Սաղ երգյիրը թաքավըերեն դարդան սոքյ ա պահըմ, մինչև վրեր թաքավերեն աշկերը սըղըցնին վրեչ։

Օրերեն մին օր էս քաղաքն ա կյամ մին դերվիշ, տրեսնըմ ա, վրեր էս քաղաքը լոխ էլ հեն ըն սոքյ. վրեչ ասըմ ըն, վրեչ խոսըմ ըն, վրեչ ուրխոթուն կա, սաղ ժողովուրթը մրեռած տուրության մեչ ըն։ Դերվիշը ըսկսըմ ա հըրցըփորձ անելը, թա պատճառը գյիդա։ Շատ հըրցընելան ետը դերվիշը վրեր գյուղում ա սոքյը թաքավըերեն ըշկերեն դարդան ա, ասըմ ա, թա. «Ես թաքավըերեն աշկերը կըլիվըցընիմ»։

Մրեծ-մրեծ մարթիքյը ուրխունալան դերվիշին տանըմ ըն թաքավըերեն կոշտը։ Պատառ հըրցըփորց ընելան ետը դերվիշը կանչըմ ա թաքավերեն տըղեն, թա ասըմ ա. «Քու հոր աշկերը սըղըցընելը հեն ա քու ծերքետ, վրեր տու օղիս, կըսըղըցնիս»։ Լոխ մընըմ ըն զարմացած, տըղան թա. «Հոր ա՞, վրեր իմ ծերքիս ինի, հինչ օղըմ ա ինի, ես իմ ջանըս էլ չըմ խնայիլ, դե հոր ա՞,

Երանի թե իմ ծերքես ինի, դե ասե, տրեսնամ հի՞նչ բիդի անիմ, հունց ա՞նիմ, վրեր սըղրցնիմ»։ Դերվիշը թա ասըմ ա. «Դե լա՛վ լըսե, էքյուծ առավոտը բյինամ ըս կյետը ծո՛ւկուն փըռնիս, թորըտ բըցըմ ըս կյետը, առաչի ծուկունը վրեր փըռնըմ ըս, աշկերը տուս ըս տամ, պիրըմ քսըմ թաքավրերեն աշկերը, ըտրանավ աշկերը արդրնալու ա։ Լա՛վ հըսկաց, ըռաչի փըռնած ծուկընեն աշկերը հանըմ ըս, պիրում»։

Էքյսը առավոտը թաքավրերեն տղան քյընամ ա կյետը ծուկուն փսնելի, ղերվիշն էլ թաքուն քյընամ ա կյետին ղըրաղըմը կյողլը կենըմ, թա տրեսնա թաքավրերեն տրղան ուրա՛ն ասածն ա՞ ընեական։ Թորը վրեր քըցըմ ա, տուս ա կյամ մին շատ լա՛վ ղա՛ղանդյ, չրտեսված ծո՛ւկուն։ Թաքավրերեն տղան եշըմ ա էտ օուկնին, մրղափուն ա կյամ, վրեր աշկերը հանե, ինքյն ուրա՛ն ասըմ ա. «Հա՛ըրս պըռաված մին մարթ ա, ըսօր-էքյուծ մըռնելու ա, մրղափո՛ւն ա, վրեր էս ծուկունին աշկերը հանիմ»։ Ասըմ ա, ծո՛ւկունը ետ քըցըմ կյետը։ Վերևհետև դերվիշին ասածը բիդի կըդարև, թորը նորից քըցըմ ա կյետը, էս անքամ տուս ա կյամ մին հասարակ ծո՛ւկուն։ Փըռնըմ ա էս ծուկունեն աշկերը հանըմ, պիրըմ տոն։ Տրեղն ու տրեղը քըսըմ ըն թաքավրերեն աշկերը։ Թաքավրերեն աշկերն ավելի յա խարաբ ինըմ, ցավն ավելի յա թունդըմ։

Թաքավրերը նան պալատականնեն վրեր տրեսնըմ ըն ավելի ա փիսացալ աշկերը, մրտածըմ ըն, վրեր էս դերվիշը յա ղասիդանա յա ըրալ, յա էլ ուրա՛նց անավ ծաղր ա ըրալ։ Հըրամայմ ըն, վրեր դերվիշին կըլո՛խը կըտրին։ Վրեր տանըմ ըն, թա կըլո՛խը կըտրին, դերվիշը խընթրում ա, վրեր մինչև ուրա՛ն կըլո՛խը կըտրելը վերչին անքամ մին խոսկ տան ուրա՛ն։ Վրեր խոսկը տամ ըն դերվիշին, դերվիշը թա ասըմ ա. «Թաքավրերեն տրղան էլ բիդի ըստեղ ինի, վրեր վերչի խոսկըս լըսե»։ Կանչըմ ըն, թաքավրերեն տրղան էլ ա կյամ։ Դերվիշն ասըմ ա թա. «Ես ուրթում ըմ օտըմ իմ մրռնելաս առաչ, վրեր ես մեղավրեր չըմ, մեղավրերը թաքավրերեն տրղան ա, վրեր առաչին ծուկունը փըռնալ ա, ղիմիշ չի ըրալ թա աշկերը տուս տա, ուրա՛ն հորը կյանքը փոխալ ա մին ծուկունու կյանքու նըհետ։ Էրկուինշի անքամ վրեր թորը քըցալ ա, փըռնալ ա օրիշ մին ծուկուն, էտ ծուկունն էլ ճարած ա իլա՛լ։ Թող թարավրերեն տրղան ասե, թա վրեր իտի չի իլա՛լ, ինձ կախ տրվեքյ»։ Թաքավրերեն տրղան տրեսնըմ ա, վրեր դերվիշը գյուդում ա, վիղն ա եր օնըմ, վրեր դուզ ա, ես ըմ մեղավրերը։ Ըստեղ դերվիշին ըղադրըմ ըն, պեց թողըմ։

Թաքավորը վրեր գյուղում ա տղան ա մեղավորը, անիծում ա տղին, թա ես քյեզ ըսպանում չըմ, զըրկում ըմ իմ թաքավորությունից, քյեզ էլ իմ երգյիրաս տուս ըմ անում. ըշտեղ օզում ըս. քյինի, ես քու հերըտ չըմ, տու էլ իմ տղաս չըս։

Թաքավորերեն տղան ըտղան լըսա տուս ա կյամ. հրդե ընգնում քյինում վրեր մին օրիշ երգյիրում ապրե։ Շատ քյընալան ետը նըղանում ա։ Մին ծառու տակե ճանապարին նըստում ա՝ դինջանա։ Էտ ծառեն տակին քընավ ա ընցնում։ Շատ-խրեգյ քընելան ետը վրեր ա կենում, տրեսնում ա ուրան նըման մին ճանապարհորթ քըշտեն նըստած, դինջանում ա։ Հըրցըփորց ընելան ետը տրեսնում ա, վրեր ըտա էլ ուրան նըման մին ճանապարհորթ ա, քյընամ ա մին երգյիր, վրեր ընդրեղ ապրե։ Ըստրեղ էրկու հոքին էլ խոսկ ըն տամ, հալալ ախպըեր տրեռնում, վրեր ուրուր հընազանդ ինին մինչև մահ։ Թաքավորերեն տղրեն անումը տընիմ ըն՝ պուճուր ախպըեր, էն մինին անումը՝ մրեծ ախպըեր։

Էրկու ախպըերք եր ըն կենում հրդե ընգնում, քյինում։ Շատ ըն քյինում թա խրրեգ։, կյամ ըն մին հաչա հրդրցու տեմ ընգնում։ Ճանապարեն մինը քյինում ա աչ, մինը՝ ծախ։ Մրեծ ախպըերն ասում ա. «Պուճուր ախպըեր, էրկու հոքի մին ճանապարավ քյընալավ վայ թե խեր չանինքյ, վրեր մին փորցանք պրտահե, էրկուսըս էլ կարող ընք փրչանանք. ե՞ք մինը մին հրդրցավ քյինի, մինը՝ մին հրդրցավ, պեն ա՝ մին փորցանք էլ վրեր պրտահենքյ, մրզանա մինը սաղ մընա»։ Պուճուր ախպըերը թա ասում ա. «Մրեծ ախպըեր, շատ դուզ ըս ասում, հունց վրեր օզում ըս. ինդի էլ քյինինքյ, տու բիդի աչ քյինա, ես՝ բիդի ծախ»։ Էրկու ախպըերքն ուրուր խոսկ ըն տամ, պայմանավրերվում, վրեր քյինին աշխադանք անին, հինչ վրեր ըշխադին, իրեք ամսից հետավ կյան էն համին ծառեն տակեն, ըշտեղ ըխպըրացալ ըն, ուրուր պրտահին. պերած աշխադանքնեն էրկու տրեղ կրես անին։ Խոսկ ըն տամ. ուրթում օտրմ։ Մրեծ ախպըերը ճանապարեն աչ ունդյունավն ա քյինում. պուճուր ախպըերը՝ ծախ։

Պուճուր ախպըերը քյընալավ, քյինալավ հրսնում ա մին բաղաք, մին սանաթքյարի քըշտի շագյիրդ մրտնում, կործ անում։ Իրեք ամրեսը վրեր թրմամում ա, ըշխադած իրեք մանեթը յոր ա օնում, կյամ համին էն ծառեն տակեն ըսպասում մրեծ ախպոր կյալին։

Մրհենգ պուճուր ախպըերը թողինքյ էն ծառրեն տակին ախպորն ըսպըսրելիս, անց կենանք մրեծ ախպորը։

Մրեծ ախպըերը շատ ա քյինում, խրեդյ ա ըյինում, հրսնում ա

մին բաղաք, նշում ա տրեսնում էտ քըղաքեն մաշտրեղը մին խիլ-
լա մարթու կըլխընեն կըտորած, տարսած, մին զըեռ սար շինած,
ըրղաքեն ժողովուրթն էլ լոխ սուքյի մըեչ։ Մընում ա զարմացած,
հում էլ վախած. Ինքյն ուրան մըտածում ա. «Տեր աստված, էս ես
հիշարի՞ղ ըմ ընդալ»։ Վերչը ըսկըսում ա հըրցըփորց անելը։ Տըես-
նում ա, վըեր էս երզիրին թաքավըերեն օնե մին հըսած-փըսած
չահիլ, շատ դաշնոդ ախճիգյ, ծընված օրից լալ ա, կարում չի թա
խոսի՝ հիշքան էլ հաքյիմ, դիդացող, դերվիշ, փալչի մարդիքյ ըն
պեդալ վըեր սրղրցնին, կըրեցալ չըն։ Էտ կուտորած կըլխընեն էլ
էն մարթկանցը կըլխընեն ա, վըերը վըեր կըրեցալ չի թա սըղրց-
նե, կըլոխը կըտըրալ ըն, տարսալ։

Մրեծ ախպըերն ասում ա. «Ես կըկարիմ էտ ըխճըկանը սը-
ղրցնիմ, վըեր խոսեա։ Ժուղովուրթը լոխ զարմանում ըն, քյինում
թաքավըրեն հայտնում, վըեր իստի մին մարթ ա եկալ, օզում ա
ըխճըկանրա սրղրցնե։ Թաքավըերը մըեծ ախպորը կանչիլ ա տում
կոշտը, նրհետը խոսում, ասում. «Վըեր կըրնցեր վըեչ սըղրցնիս,
բու կըլոխըտ էլ էն մընացածեն նըման կըտըրել ըմ տալու»։ Մըեծ
ախպերն արխային ասում ա. «Շատ լավ, թաքավըերն ապրած կե-
նա, եթե կարիմ վըեչ սըղրցնիմ, կըլոխըս կըտըրե, պա վըեր սը-
ղրցրնիմ, հինչ ը՞ս տալու»։

Թաքավըերը թա. «Հինչ վըեր օղիս, կըտամ, թաքյ լըհա սը-
ղրցնիս»։ Մրեծ տխպըերը վստխում ա, թա օղածն ասե, թաքավըերը
տա վրեչ, ասում ա. «Թաքավըերն ապրած կենա, իմ օղածըս էն ա,
վըեր հունց վըեր տու ըս օղում, ըխճըկանրտ լուղին պեցվի, ես էլ
ինդի օղում ըմ, վըեր իմ օզածըս տաս, ամմա դե վախում ըմ տաս
վրեչ»։ Ըստրեղ թաքավըերը կըլոխ ա ընդնում, վըեր խոսկն ըխճը-
կանը մասին ա, ասում ա. «Հա՛, հինչ վըեր օղիս, կըտամ, թաքյ լըհա
սըղրցնիս, ա՛սե, տրեսնամ հի՞նչ ըս օզում»։ Մրեծ ախպըերն
ասում ա. «Վրեր կարիմ վրեչ սըղրցնիմ՝ կըլոխըս կըտրե, վըեր
սըղրցնիմ՝ ախճիդյըտ ինձ բիդի տաս»։ Թաքավըերն ասում ա.
«Հա՛, կըտամ, թաքյ լըհա սրղրցրնիս ըխճըկանրս»։

Մրեծ ախպըերը մին օթաղ ա օզում, էս ութաղըմը մին մարթ
կյոդլը կրցընում, վըեր էտ մարթը լըսե, տրեսնա թա հունց ա թա-
քավրերեն ախճիդյը խոսելու։ Ետավ ըստոլեն յրա մին շամ-
դան տինում, թաքավրերեն ախճիդյը պիրում էտ օթաղըմը ըստոլեն
ըշտեն նըստրցընում, ինքյը տուս կյամ մին պատառ կենում, հտ-
նան նի մըտնում, թա ասում ա.

— Պա՛րև, շամդան ախպըեր։

— Պա՛րև, ղոնաղ ախպըեր։

— Շամդան ախպըեր, մին հաքյաթ պատմըե, լըսինքյ։

Շամդանը թա. «Ղոնաղ ախպըեր, տու լավ կըպատմիս, պատմի լըսինքյ»։ Ղոնաղ ախպըերն ասըմ ա. «Լա՜վ, ես պատմիմ, տուք անդուճ կալիքյ։ Ինըմ ա չինըմ, մին կընեդյ ա ինըմ։ Էս կընդանն ինըմ ա մին մարթ, մին էլ մարթին ախպըերը։ Մին օր էրկու ախպըեր ուրա՜նց երդյիրան քյինըմ ըն մին օրիշ երգյիր ըշխադանքու։ Շատ-խըրեգյ քյընա՜լան ետը կյամ ըն հըսնըմ մին ըխպիրի կոշտ։ Էրկու ախպըեր մըսլըհաթ ըն անըմ՝ պատառ ճուր խըմին, նըստին դինչանան, ետավ եր կենան քյընա՜ն։ Լըսըմ ը՞ս շամդան ախպըեր»։

— Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըեր։

«Շամդան ախպորըս ասիմ, ախպուրից ճուր խըմելիս վախտը ծառան մին ծըղոտ ա վըեր ընգնըմ, էրկուսին վիղավն ընգնըմ, էրկուսին վիգն էլ կըտըրըմ, վըեր քըցըմ։ Էրկու ախպըերն էլ վըեր ըն տրեռնըմ ըխպիրին քշտին առանց կըլխընե։ Կընդանը սըերտը ըսկսըմ ա թխըելը, վըեր մարթին ան ախպորը մին փորցանք ա պըտահալ։ Եր ա կենըմ ըտրանց եկած ճանապարավը քյընա՜մ։ Քյընամ ա, քյընա՜մ, կյամ ա հըսնըմ էտ ախպո՜ւրին կոշտը, տրեսնըմ մարթը նան ուրա՜ն ախպըերը վըեր ընգած, մին պատառ ուրա՜նց անա էլ հեռու կըլխընընեն վըեր տրեռած։ Էս կընեգյն ըսկսըմ ա լա՜ց ինիլը, կըլո՜խը թակըելը, ետ տրեռնըմ, տրեսնըմ մին ծրետ կըլխանը երը թուչըմ ա, կյամ կաղնըմ մին ղըրաղ տրեղ, լո՜ղու առնըմ, էտ կընդանը հըրցնըմ.

— Քոյրիկ շա՜ն, էտ մարթը քու հինչըտ ա՞։

— Մինը իմ մարթս ա, մինը՝ մարթիս ախպերը։

— Լա՜ցավ վրեչ մին պեն չըս կարել անիս, հես ա ես քյեղ ղարկիմ մին թեփուռ, էտ թեփուռը եր կալ քսի կըլխընեն, ըխպըրըմը լվաց, ետավ տիր ուրա՜նց տրեղերը, մարթըտ էլ, մարթիտ ախպերն էլ կըսըղանան։

Ծրետը թեփուռը վըեր ա քցըմ, ինքյը թըռչըմ, քյինըմ։ Էս կընեգյը իտի էլ անըմ ա, ամմա դե կըլխընեն թա՜րս ա տինըմ՝ մարթին կըլոխը տինըմ ա տա՜քյո՜րը երան, տա՜քյո՜րը կըլոխը՝ մարթին երանու

— Լըսըմ ը՞ս, շամդան ախպըեր։

— Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըեր։

«Էտ մարթիքյը սըղանըմ ըն, մարթին չանը, տա՜քյո՜րը կըլոխը

ըսկսում ըն հոչաթ տալ։ Տաքյորը կըլոխն ասում ա՝ կընեգյն իմըս ա, մարթին ջանն էլ ասում ա՝ չէ՛, իմըս ա»։

— Լըսում ը՞ս, շամդան ախպըեր։

— Լրսում ըմ, ղոնաղ ախպըեր։

— Մըհենգյ քյըղանա յըմ հըրցընում, շամդան ախպըեր, կընեգյը հուրն ա՞, հուր կը հըսնե՞»։ Շամդանը թա. «Կընեգյը ընդրանն ա, հուր յրա վըեր մարթին կըլոխն ա»։ Թաքավըերեն լալ ըխճըկանը լուղուն պենվում ա, թա ասում ա. «Չէ՛, սխալ ըս ասում, շամդան ախպըեր։ Չընայած վըեր մարթին կըլոխը տաքյորը երան ա, կընեգյը հըսնում ա էն շանեն, վըերին երա վըեր տաքյորը կըլոխն ա։ Չէ՞ վըեր էտ կընեգյը շանավ, հոքավ էն մարթինն ա իլալ»։

Մրեծ ախպըերը լըհա՝ վըեր լըսում ա՝ թաքավըերեն ախճիգյը խոսից, եր ա կըենում, թա. «Պարի քշեր, շամդան ախպըեր»։ Շամդանը թա. «Լուսը պարի, ղոնաղ ախպըեր»։ Էն մարթը վըեր կյողը կացած ա իլալ որպես շըհաղ, քյընամ ա թաքավըերեն ասում, թա. «Իսկապես ախճիգյըտ խոսալ ա»։ Թաքավըերը հըվատում չի, ասում ա. «Մինչև վըեր ես ինքյըս լըսիմ վըեչ իմ ըխճըկանըս խոսրելը, կարել չըմ հըվատամ»։

Կանչում ըն մրեծ ախպորը, թա. «Թաքավըերը հըվատում չի, մինչև վըեր ինքյը լըսե՝ վըեչ»։ Մրեծ ախպըերը թա ասում ա. «Դե հունց անինքյ, էրյուծ ուրուգյու թաքավըերն էլ կը լըսե»։

Էրյսը պերում ըն էլհա ախճիգյը նըստըցընում էն ութաղըմը, շամդանեն քըշտեն։ Թաքավըերն էն ութաղըմը մին ղրաղ տըեղ կյոդլ ա կենում։ Մրեծ ախպըերը նի յա մընում օթաղը.

— Պա՛ռև, շամդան ախպըեր։

— Պա՛ռե, ղոնաղ ախպըեր։

— Շա՛մդան ախպըեր, մին հաքյաթ պատմե։

— Ղոնաղ ախպըերը լավ կըպատմե։

Մրեծ ախպըերը պատմում ա էս հաքյաթը. «Ինում ա չինում, մին տերտեր ա ինում, մին դարդի, մին ղուլգյար։ Էս իրեք հոքին մին ճանապարավ քյինալիս ըն ինում»։

— Լրսում ը՞ս, շամդան ախպըեր։

— Լրսում ըմ ղոնաղ ախպըեր։

«Շատ ըն քյինում, թա խըրեգյ, օրը մըթնում ա։ Ճանապարին հըսնում են մին ծմակ։ Տերտերն ասում ա. «Եկեք քշերըս ըստեղ կենանք, մինչև լուսանա, մունք էլ համ դինջանանք, համ էլ քոն ինինքյ»։ Դարդին ան դուլգյարը իտի էլ անում ըն։ Տերտերին նըհետ քշերը մընում ըն էտ ծըմակըմը, քշերը քոն ինելիս վախտը

որոշում ըն, վրեր ուրանց յրա կյուլա՞. արչա՞. կյա վրեչ. նուրաթավ ղարաղուլ քաշին։ Տերտերն ան դարզին քոն ըն ինում. դուլգյարը ղարաղուլ ա քաշում։ Ղարաղուլ կաղնած վախտը էտ դուլգյարը փադից մին մարթ ա շինում, կըղնըցընում»։

— Լըսում ը՞ս, շամդան ախպըր։

— Լըսում ում, ղո՛նաղ ախպըր։

«Դուլգյարը քյընամ ա քոն ինում, կյամ ա դարզին կաղնում»։

— Լըսում ը՞ս, շամդան ախպըր։

— Լըսում ում, ղոնաղ ախպըր։

«Էս դարզին ղարաղուլ կաղնած տըեղը եշում ա տըեսնում մին փադի մարթ կաղնած, ասում ա. «Ես էլ շորը կարիմ, կյեց տամ»։ Ասում ա, շորը կարում, կյեց տամ, ինքը քյընամ քոն ինում։ Ղարկում ա տերտերին»։

— Լըսում ը՞ս, շամդան ախպըր։

— Լըսում ում, ղոնաղ ախպըր։

«Տերտերը վրեր կյամ ա ղարաղուլ քաշի, տըեսնա մին փադի մարթ, շորերը կյեցած, կաղնած։ Գյուղում ա, վրեր սա գուլգյարեն ան դարզուն պենն ա։ Մըտածում ա, մըտածում. թա. «Ես էլ իմ շնորքըս նըշանց տամ»։ Ասում ա, աղոթկ անում ասծու. վրեր էս փադի մարթին լուզու տա, խոսըթ»։

— Լըսում ը՞ս, շամդան ախպըր։

— Լըսում ում, ղոնաղ ախպըր։

«Տերտերը ասծու աղոթկ ա անում։ Հունց ա պըտահում. էս փադի շինած մարթը ըոկսում ա խոսելը։ Առավոտը վրեր լուսանում ա, դուլգյարը, դարզին, տերտերը ըսկսում ըն կրուվրել. նա ասում՝ իմն ա, էն մինը թա՝ իմն ա. էն մինը՝ թա չէ՞, իմն ա։ Քյեղ ում հըրցընում, շամդան ախպըր, հուր ա՞ հըսնում։ Շամդանը թա. «Տերտերին, եթե տերտերը աղոթկ չանար, նա էլ խոսել չար»։

Ըստեղ թաքավրերեն ախճիղյը ըսկսում ա խոսելը, թա. «Չէ՞, շամդան ախպըր, դուզ չըս ասում, էտ մարթը պատկանում ա հիմքին, հիմքը դուլգյարն ա, եթե դուլգյարը փադից էտ մարթը շինած չինար, դարզին շորերը կարել չար, տերտերը աղոթկ չար անել, ուրեմն հիմք ա իլալ, էտ հիմքն էլ հունցը վրեր մունք լըսեցինքյ, դուլգյարն ա իլալ, ուրեմն դուլգյարին էլ հըսնում ա»։

Թաքավրերն ուրխութունան գյուղում չի, թա հինչ անե, վրեր տըեսնում ա ախճիղյը խոսից հերիքյ չի, հալա նրան սրխալն էլ փըռնից։ Ըստեղ մըեծ ախպըրը թա ասում ա. «Ես քյեցի, շամդան ախպըր»։ Թաքավրերը տուս ա կյամ, թա ասում ա. «Վրեչ

մին տրևդ էլ գլինա՞լու չես, մրեր պայմանը պայման ա, իմ խոսքրս էլ խոսկ ա։

— Լրսրմ ը՞ս, շամդան ախպրեր։

— Լրսրմ ըմ, ղոնաղ ախպրեր։

— Ախճիդյրս եր կալ, գյինինքյ հըրսանեքյ անինքյ, գյեզ հալալ ինի։

Թաքավրևրը, ախճիգյը, մրեծ ախպրերը կյամ ըն թաքավրեբրևն սոնր։ Թաքավրերը օխտը օր, օխտը քշեր հըրսանեքյ ա անրմ, ախճիդյը տամ մրեծ ախպորը։ Մին բանի օր մրեծ ախպրերը թաքավրևրին տանր ըպրելան ետը թաքավրերեն խնթրրմ ա, վրեր կընդտնը յոր ունև, գյրնա՞ ըիդի ուրա՞ն պուճուր ախպրերը։ Թաքավրևրը համաձայնվրմ ա, պերրմ բառասուն օղտ պեռնրմ, մրեծ հարուստութուն տամ, մրեծ պաղմութունավ Ճանապարրմ ըիդի ուրա՞ն ախպորը կոշտը։

Մրևծ տխպրևրն ուրա՞ն կընդանավը, բառասուն օղտավ, մրեծ հարուստութունավ կյամ ա էն ծառեն տակը, ըշտեղ վրեր պուճուր տխպորը խոսկ ա տրվալ։ Կյամ ա, տրեսնրմ ախպրերը ըսպասրմ ու։ Պուճուր ախպրերը վրեր իտի տրեսնրմ ա, մընրմ ա զարմացած, վրևր մրևծ ախպրևրն իտի մրեծ պաղմությունավ եկալ ա։ Մրեծ ախպրերը պուճուր ախպորն ասրմ ա. «Դե, պեր հինչ վրեր ըշխադալ ընբ, կես անինքյ»։ Պուճուր ախպրերը հըմընչելավ իրեք մանեթր տուս տ օնրմ, թա. «Հասե, հինչ օնիմ-չօնիմ, իմ աշխադանքրս էս ա տրեռալ»։ Մրեծ ախպրերը ըսկսրմ ա լոխ հարուստութունր կես անելը։ Քսան օղտը ուրա՞ն հարստութունավը տամ ա պուճուր ախպորը, իրեք մանեթը կես անրմ։ Թա ասրմ ա. «Կընեղն էլ ըիդի կես անինքյ»։ Ասրմ ա թա չէ, կընեգյը ծառան կապրմ ա։ Ըսարեդ էտ կընեգն էլ, պուճուր ախպրերն էլ շատ վախրմ ըն։ Պուճուր ախպրերը ասրմ ա. «Մրեծ ախպրերն ապրած կենա, կընեղյրտ թող գյեղ մընա, մեխկ ա, կես մանել»։ Մրեծ ախպրերը թա ասրմ ա. «Չէ՞, ըիդի կես անիմ»։ Ասրմ ա, ծերքեն ղա՞մա՞ն եր կալած վաղ տամ ըիդի կնդանը։ Մին վախտ կընեգյը վրխելան հարայ ա տամ, պրրա՞նան օխծեր ա թափվրմ։ Ըստեղ կընեգյը ճրղղում ա, թա. «Ուխխա՞յ, ըզըդվրեցե, դինչա՞ցե՞...»

Մրեծ ախպրերը վրեր տրեսնրմ ա կընեգյը իտի ասից, աղաղվից, ըրխյանանրմ ա, թա ասրմ ա. «Դե՞, ես գյեցե մրհենգյ, կընեգն էլ գյեղ, լոխ հարուստութունն էլ գյեղ»։ Ասրմ ա, ճանապար ընդնրմ, գյինրմ։

Պուճուր ախպրերը մընամ ա զարմացած, վրեր մընացալ ա՞ բառասուն պեռնած օղտը, հարուստութունը, կընեգյը ուրա՞ն։ Էս

հինչ պե՞ն ա, մրեծ ախպրերն էլ քյինից։ Վազ ա տամ. քյինըմ մրեծ ախպորը հրսնըմ, թա. «Մին ասե տրեսնամ՝ սա հի՞նչ ա. սա հի՞նչ պեն ա ախեր, վրեր տու իտի յրս ըրալ»։ Մրեծ ախպրերը թա ասըմ ա. «Էտ կընեգյը թաքավրերին ախմիգյն ա, ըտա խոխ. վրխտանց օխծի անա վրխեցած ա իլալ, լուզուն կրտըրված ա ըլալ, ես խըրեգյ-խըրեգյ խուսցըրալ ըմ, մրհենգյ հանց ըրալ ըմ. վրեր լափ ըզագվալ ա, ես էլ էն ծուկունն ըմ, վրեր տու ինձ փրունալ ըս, առաչին դոնըմը քու հոր ըշկրերեն դարդան իմ աչկերըս տուս չըս տըվալ։ Ես մրտածալ ըմ, վրեր քյեզ քրթենամ, լիվոթունետ լիվոթուն անիմ, մրհենգյ հինչ վրեր օգալ ըմ. ինդի էլ ըրալ ըմ։ Ես ծուկուն ըմ, քյինըմ ըմ կյետը. հինչ ը՞մ անըմ կընեգյը, հարուստոթունը, քյընացեքյ բախտավրեր ըպրեցեքյ, աշխարքավրս էլ տարածեցեքյ, հինչքան կարըմ ըք, ուրուր լիվոթուն ըրեքյ։ «Ծուկունը փրունե, քցի ճուրը. չըգյիգացողը գյիդալ չի, ծուկունը կըգյիդա», դե, ես քյեցե կյետը»։

Պուճուր ախպրերը ըստեղ կըլոխ ա ընգնըմ՝ պենը հինչըմն ա։ Կյամ ա կընեգյն էլ, հարուստոթունն էլ յոր օնըմ, քյինըմ բախտավրեր ապրըմ։